

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

Հանքարդյունաբերության ամբիոնը պատրաստում է մասնագետներ, ովքեր կարող են աշխատանքի անցնել հանքաքարի ջարդման տեղամասում, հարստացուցիչ ֆաբրիկայում՝ հանքաքարի մանրեցման և ֆլոտացման տեղամասում, ջրազրկման տեղամասում, ռեագենտային բաժնում, քիմիական և հետազոտական լաբորատորիաներում, պոչային տնտեսությունում որպես ճարտարագետ, տեղամասի պետ և վարպետ, հանքահարստացուցիչ և հանքարդյունաբերական կոմբինատների ճարտարագետներ, ինչպես նաև նրանք կարող են աշխատել հետազոտական և նախագծային ինստիտուտներում, համապատասխան պետական կառավարման համակարգում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ




ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՄ



- 📍 ՀՀ, 3307, Սյունիքի մարզ, Կապան, Բաղաբերդ 28
- ☎ +374 (285) 5 46 80
- 📞 +374 (285) 5 46 80
- ✉ kapan@polytechnic.am
- 🌐 www.haphkapan.com

«ԿԱՊԱԳԱՆԱՐԱԳԵՏ»
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԼԵՄԻՆ





Լեռնահարստացուցիչ ֆաբրիկաներում միներալային հումքի վերամշակման, հարստացման, համալիր օգտագործման, ինչպես նաև անթափոն արտադրության կիրառման ժամանակակից տեխնոլոգիաները հիմնված են օգտակար հանածոների հարստացման տարբեր մեթոդների կիրառման վրա՝ օգտագործելով բաժանվող միներալների ֆիզիկական, էլեկտրական, մագնիսական և ֆիզիկաքիմիական հատկությունները:

ՄԵՐ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ:
Օգտակար հանածոների հարստացում մասնագիտությամբ ուսանողներն իրենց արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անց են կացնում «ՉՊՄԿ» ՓԲԸ-ի, «ԱՊՄԿ» ՓԲԸ-ի, «ԿԼՅԿ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆաբրիկաներում, քիմիական և հետազոտական լաբորատորիաներում:

«ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ» ամենակարևոր միջանկյալ օղակն է օգտակար հանածոների արդյունահանման և հումքի հետագա վերամշակման միջև: Այն լեռնահանքային արտադրության կարևոր գործընթացներից մեկն է, որը թույլ է տալիս վերամշակել ոչ միայն բարձր, այլև ցածր պարունակությամբ հանքաքարեր և ըստ կազմի ավելի բարդ միներալային հումք: Հանքաքարի հարստացում կոչվում է միներալային հումքի սկզբնական մշակման գործընթացի ամբողջությունը, որի նպատակն է՝ բոլոր օգտակար հանածոների անջատումը դատարկ ապարներից, և վերջնական արդյունքում ստանալ խտանյութ, ինչն էլ կհանդիսանա հումք մետալուրգիական արտադրության համար:

Հ տնտեսության հզորացման առաջնահերթ պայման է հանդիսանում ընդերքի ռեսուրսների, միներալային հումքի և նյութերի առկայությունը, նոր հանքավայրերի շահագործումը, հայտնաբերված հանքանյութերի վերամշակումը, օգտակար հանածոների հարստացումը, գործող լեռնային ձեռնարկությունների աշխատանքի էֆեկտիվության բարձրացումը ի հաշիվ գիտատեխնիկական առաջընթացի արտադրության մեջ գիտական նվաճումների, բարձրագույն տեխնոլոգիաների, առաջավոր փորձի արագ ու լայն ներդրման միջոցով:

